Գրանցված է»
ՀՀ արդարադատության նախարարության կողմից
16 փետրվարի 2015թ. Պետական գրանցման թիվ 60615043

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

30 հունվարի 2015թ. **N 4-Ն**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ, 13.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել՝

1) տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանը լրացնելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մ ո ւ կ ո ւ չ յ ա ն**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2015թ. հունվարի 30-ի N 4-Ն որոշման

Թիվ ------/------

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

_____

(Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը՝ մարզ, համայնք, հասցե)

Տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանը բաղկացած է երեք մասից:

Առաջին մասը լրացվում է գրանցամատյանով սահմանված ձևին համապատասխան:

Երկրորդ մասում լրացվում է դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների վերաբերյալ անհրաժեշտ տվյալները:

Երրորդ մասում լրացվում են հանձնաժողովի մտից և ելից փաստաթղթերը:

Գրանցամատյանում նշվում է հանձնաժողովի նիստերին անդամների մասնակցության մասին, որի տակ ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Գրանցամատյանում փաստաթղթերի հաշվառումը կատարվում է արաբական թվանշաններով հերթական համարակալմամբ:

Տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
Հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել քվեարկությանը:
Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին:

Տեղամասային հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող են ներկա լինել՝

Վերադաս /կենտրոնական և ընտրատարածքային/ հանձնաժողովների անդամները՝ համապատասխան հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ,

յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև երկու դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ,

տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ մեկ դիտորդ:

Տեղական դիտորդը հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե դիտորդի հավատարմագրման վկայականից բացի ունի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ ստուգարքի արդյունքով ստացել է դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական:

զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

	Հեռախոս
Կենտրոնական հանձնաժողով	
Տեղական հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով	
Համայնքի ղեկավար	
Ոստիկանության բաժին	
Առաջին ատյանի դատարան	
Դատախազություն	

Տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի կազմը

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	**Նշանակված է՝** (կուսակցություն, կուսակցությունների դաշինք, ԸԸՀ)	Պաշտոն	Հեռախոս	Լիազորությունների վաղաժամկետ դադարման/դադարեց-ման ամսաթիվ
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պարտավորվում եմ հանձնաժողովի անդամի պարտականություններն իրականացնել անաչառ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի իր մասնակցած առաջին նիստում հրապարակայնորեն ընթերցում է պարտավորության տեքստը և ստորագրում:

Ես, որպես թիվ _____/_____ տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի անդամ, ընթերցելով «Տեղամասային հանձնաժողովի անդամի պարտականությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու մասին» պարտավորության տեքստը ստորագրում եմ

Ազգանուն, անուն, հայրանուն	**Ստորագրություն**	**Օր, ամիս, տարեթիվ**

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի առաջին նիստի

«_____» _____ 20 թ. **ժամը՝ _____**

Նիստին ներկա են՝

Հ/Հ	**Ազգանուն, անուն, հայրանուն**	**Ստորագրություն**

Նիստը վարում է հանձնաժողովի նախագահ _____

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, նիստին ներկա են հանձնաժողովի _____ անդամ:

(Նիստին ներկա դիտորդների, ՀԼՄ-ների ներկայացուցիչների տվյալները լրացվում են գրանցամատյանի երկրորդ մասում՝ յուրաքանչյուրի համար նախատեսված տեղում)

Օրակարգում՝ «Տեղամասային հանձնաժողովի անդամի պարտականությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու մասին» պարտավորության տեքստի ընթերցում և ստորագրում

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար _____
ստորագրություն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ _____

«_____» _____ 20 թ. ժամը՝ _____

Նիստին ներկա են՝

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ստորագրություն

Նիստը վարում է _____

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, նիստին ներկա են հանձնաժողովի _____ անդամ:

(Նիստին ներկա դիտորդների, ՀԼՄ-ների ներկայացուցիչների տվյալները լրացվում են գրանցամատյանի երկրորդ մասում՝ յուրաքանչյուրի համար նախատեսված տեղում)

Օրակարգում՝ ***1. Տեղամասային հանձնաժողովի անդամների անհատական կնիքների բաշխման վիճակահանություն,***
2. Քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի անդամներին որոշելու վիճակահանություն,
3. Քվեաթերթիկների և տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակների էջերի ստորագրում:

Տեղամասային հանձնաժողովի անդամների անհատական կնիքների բաշխման վիճակահանություն

Տեղամասային հանձնաժողովի նախագահը անհատական կնիքները տեղավորեց վիճակահանության արկղի մեջ, հանձնաժողովի անդամները, այդ թվում հանձնաժողովի նախագահը և քարտուղարը՝ ազգանունների այբբենական հերթականությամբ, վիճակահանության արկղից հանեցին մեկական անհատական կնիք և անհատական կնիքի նմուշն ամրագրվեց ստորև.

Հ/Հ	Ազգանուն, անուն	Անհատական կնիքի (սեփական դրոշմի) նմուշը	

Քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի անդամներին որոշելու վիճակահանություն

Տեղամասային հանձնաժողովի նախագահը պատրաստեց նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվին հավասար թվով իրարից չտարբերվող թերթիկներ և երեքի վրա նշեց ***«Տեղական հանրաքվե»*** բառերը: Բոլոր թերթիկները ծալվեցին այնպես, որ միմյանցից չտարբերվեն և տեղավորվեցին վիճակահանության արկղի մեջ: Հանձնաժողովի անդամները, այդ թվում հանձնաժողովի նախագահը և քարտուղարը՝ ազգանունների այբբենական հերթականությամբ, վիճակահանության արկղից հանեցին մեկական թերթիկ:

Վիճակահանության արդյունքում որոշվեց, որ.

Տեղական հանրաքվեի քվեաթերթիկները և քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակների էջերը ստորագրելու են տեղամասային հանձնաժողովի անդամներ՝

Հ/Հ	Ազգանուն, անուն	Նմուշ
1.		
2.		
3.		

Քվեաթերթիկները և ցուցակների էջերը ստորագրող անդամը ստորագրման գործառույթի կատարման իր ընտրած տարբերակի (ՏՀՏՀ անդամի անհատական կնիք, ստորագրություն, սեփական դրոշմ) նմուշը դնում է իր տվյալների դիմացի վանդակում:

Քվեաթերթիկները և քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակների էջերը ստորագրելու ընթացքում հանձնաժողովի անդամը ստորագրման իր ընտրած տարբերակը փոխել չի կարող:

Տեղամասային հանձնաժողովի անդամը կարող է ունենալ սեփական դրոշմ, սակայն այն ունենալը պարտադիր չէ:

Տեղամասային հանձնաժողովի անդամը սեփական դրոշմը, իր ստորագրության փոխարեն, կարող է օգտագործել միայն հետևյալ դեպքերում.

1/ քվեարկության նախորդ օրը՝ և սեփական դրոշմով դրոշմել քվեաթերթիկները և ցուցակների բոլոր էջերը (ՀՀ ընտրական օրենսգրքի 59-րդ հոդվածի 7-րդ մաս),

2/ հաշվարկված և տեսակավորված քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների փաթեթները սեփական դրոշմով դրոշմելու դեպքում (ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 8-րդ մաս),

3/ պարկը սեփական դրոշմով դրոշմելու դեպքում (ՀՀ ընտրական օրենսգրքի 71-րդ հոդվածի 7-րդ մաս):

ՀՀ ընտրական օրենսգրքի 59-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգի համաձայն գրանցամատյանում դրվում է նաև տեղամասային հանձնաժողովի անդամի ստորագրության և սեփական դրոշմի նմուշները:

Արձանագրություն
Տպագրական խոտանի պատճառով՝ սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարներով քվեաթերթիկների մասին

Տեղամասային հանձնաժողովում՝ քվեաթերթիկների ստորագրման ընթացքում, մարվել է տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող _____ և (կամ) կրկնվող համարով _____ հատ քվեաթերթիկ:

Ընդամենը՝ _____ հատ:

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար _____
ստորագրություն

Ժամը _____ ավարտվեց տեղամասային հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների և քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակների էջերի ստորագրումը:

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար _____
ստորագրություն

Արձանագրություն
Չհրկիզվող պահարանը ոստիկանության ծառայողներին պահպանության հանձնելու մասին

«____» _____ 20 թ. ժամը՝ _____

Չհրկիզվող պահարանը փակված, փակման մասում հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից ստորագրված թղթով սոսնձված պահպանության է հանձնվում ոստիկանության ծառայողներ _____ և _____ :

Հանձնող՝ _____ _____
(ստորագրություն) **(անուն, ազգանուն)**

Ընդունող՝ _____ _____
(ստորագրություն) **(անուն, ազգանուն)**

_____ _____
(ստորագրություն) **(անուն, ազգանուն)**

Արձանագրություն
Չհրկիզվող պահարանը ոստիկանության ծառայողներից ընդունելու մասին

«____» _____ 20 թ. ժամը՝ _____

Չհրկիզվող պահարանը՝ փակված վիճակում, ոստիկանության ծառայողներից ընդունվեց:

Ընդունող՝ _____ _____
(ստորագրություն) **(անուն, ազգանուն)**

Հանձնող՝ _____ _____
(ստորագրություն) **(անուն, ազգանուն)**

_____ _____
(ստորագրություն) **(անուն, ազգանուն)**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ____

«_____» _____20 թ. **ժամը՝ _____**

Նիստին ներկա են՝

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ստորագրություն

Նիստը վարում է _____

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, նիստին ներկա են հանձնաժողովի _____ անդամ:

(Նիստին ներկա դիտորդների, ՀԼՄ-ների ներկայացուցիչների տվյալները լրացվում են գրանցամատյանի երկրորդ մասում՝ յուրաքանչյուրի համար նախատեսված տեղում)

Օրակարգում՝

1. Քվեարկության օրը տեղամասային հանձնաժողովում 2 ժամը մեկ պարբերականությամբ՝ քվեարկությանը մասնակիցների գրանցումն իրականացնող, քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող, քվեարկության ծրարների կնքման և քվեատուփի համար պատասխանատու անդամներին որոշելու վիճակահանություն
2. Քվեարկության կազմակերպում

Քվեարկության օրը տեղամասային հանձնաժողովում 2 ժամը մեկ պարբերականությամբ՝ քվեարկությանը մասնակիցների գրանցումն իրականացնող, քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող, քվեարկության ծրարների կնքման և քվեատուփի համար պատասխանատու անդամներին որոշելու վիճակահանություն

Տեղամասային հանձնաժողովի նախագահը պատրաստեց վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամների թվին համապատասխան, իրարից չտարբերվող թերթիկներ և կատարեց համապատասխան նշումներ: Բոլոր թերթիկները ծալվեցին այնպես, որ միմյանցից չտարբերվեն և տեղավորվեցին վիճակահանության արկղի մեջ:

Հանձնաժողովի անդամները, բացառությամբ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի, ազգանունների այբբենական հերթականությամբ յուրաքանչյուր հերթափոխի համար վիճակահանության արկղից հանեցին մեկական թերթիկ:

Վիճակահանության արդյունքում որոշվեց՝

Հերթափոխ	Քվեարկության մասնակիցների գրանցումն իրականացնող (մինչև 1000 մասնակցի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում՝ երկու անդամ)		Քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող (մինչև 1000 մասնակցի հաշվարկով առնվազն՝ մեկ, իսկ 1000-ից ավելիի դեպքում՝ երկու անդամ)		Քվեարկության ծրարների կնքման և քվեատուփի համար պատասխանատու (առնվազն մեկ անդամի)
	«ցուցակ 1»	«ցուցակ 2»	«քվեաթերթիկ 1»	«քվեաթերթիկ 2»	
8-10					
10-12					
12-14					
14-16					
16-18					
18-20					

(Յուրաքանչյուր հերթափոխի դիմաց՝ դատարկ վանդակներում նշվում է վիճակահանության արդյունքում համապատասխան գործառույթն իրականացնող հանձնաժողովի անդամի անուն-ազգանունը)

Ստուգվեց փաթեթավորված կնիքի փաթեթի անձեռնմխելիությունը և փաթեթավորված կնիքը բացվեց,

Կ.Տ. կնիքի համարն է _____:

Տեղամասային հանձնաժողովի նախագահը՝

ստուգեց քվեատուփի (քվեատուփերի՝ միաժամանակ մեկից ավելի քվեարկությունների դեպքում) դատարկ լինելը, քվեատուփը փակեց և կնքեց հատուկ կապիչներով,

հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի հանձնեց նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն ամրագրված անհատական կնիքը,

քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակները ըստ հերթափոխի գրաֆիկի հանձնեց քվեարկության մասնակիցների գրանցման համար պատասխանատու անդամին,

քվեաթերթիկները և քվեարկության ծրարները՝ հարյուրական կապերով ըստ հերթափոխի գրաֆիկի հանձնեց քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամին,

Կնիքը, դրոշմակնիքը և տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները ըստ հերթափոխի գրաֆիկի հանձնեց քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին:

Տեղական հանրաքվեի տեղամասը հայտարարվեց բացված:

Գրառումներ

Քվեարկության ընթացքում _____ հարցով տեղական հանրաքվեի

(նշվում է հանրաքվեի դրվող հարցը)

քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնելու և օգտագործված քվեաթերթիկների ելունդները հանձնելու մասին

Ստացված քվեաթերթիկների թիվ	Ստացված քվեարկության ծրար թիվ	Հանձնաժողովի անդամի ստորագրություն	Հանձնաժողովի անդամից ստացված օգտագործված քվեաթերթիկների ելունդների թիվ	Հանձնաժողովի նախագահի ստորագրություն

Գրառումներ

Քվեարկության օրը մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տեղական հանրաքվեի տեղամասում քվեարկությանը մասնակցած անձանց թվի վերաբերյալ

Մինչև ժամը	11.00	14.00	17.00	20.00
քվեարկությանը մասնակցած անձանց թիվ				

(Տեղամասային հանձնաժողովը պարտավոր է տեղամասում քվեարկությանը մասնակցած անձանց թվի վերաբերյալ վերը նշված աղյուսակի տվյալները համապատասխանաբար մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը հաղորդել տեղական հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողով)

Գրառումներ

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քվեարկության մասնակցին օգնող անձի տվյալների մասին

Հ/Հ	Օգնող անձի ազգանուն, անուն, հայրանուն	Անձը հաստատող փաստաթղթի համար

Գրառումներ

Քվեարկության ընթացքում «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտման դեպքի վերաբերյալ հանձնաժողովի անդամի գնահատականի մասին

Հանձնաժողովի անդամի Ա. Ա. Հ.	*Խախտման վերաբերյալ հանձնաժողովի անդամի գնահատականը*	*Այլ նշումներ*

Տեղամասային հանձնաժողովի նախագահը ժամը 20.00-ին հայտարարեց քվեարկության ավարտի մասին և արգելեց քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց մուտքը քվեարկության սենյակ: Քվեարկության սենյակում գտնվող քվեարկության մասնակիցներին քվեարկելու հնարավորություն տրվեց, որից հետո հանձնաժողովի նախագահը փակեց քվեատուփի ճեղքը:

Քվեարկությունն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար _____
ստորագրություն

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ____

«_____» _____20 թ. **ժամը՝ _____**

Նիստին ներկա են՝

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ստորագրություն

Նիստը վարում է _____

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, նիստին ներկա են հանձնաժողովի _____ անդամ:

(Նիստին ներկա դիտորդների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների տվյալները լրացվում են գրանցամատյանի երկրորդ մասում՝ յուրաքանչյուրի համար նախատեսված տեղում)

Օրակարգում՝ ***Տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփում***

Տեղամասային հանձնաժողովը՝

1) փաթեթավորեց հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, կնքեց ծրարը և այն տեղավորեց տեղական հանրաքվեի փաստաթղթերի պարկում.

2) հաշվարկեց և արձանագրեց չօգտագործված, քվեարկության մասնակիցների կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված, ինչպես նաև տպագրական խոտանի պատճառով՝ սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարով քվեաթերթիկների ընդհանուր թիվը _____, ապա չօգտագործված քվեաթերթիկները՝ ներքևի ձախ կամ աջ անկյունից կտրելով մարեց, մարված բոլոր քվեաթերթիկները տեղադրվեցին ծրարում, ծրարը կնքվեց և տեղադրվեց պարկում,

3) փաթեթավորեց օգտագործված քվեաթերթիկների ելունդները, կնքեց ծրարը և տեղադրվեց պարկում.

4) հաշվարկեց՝

Հիմնական ցուցակում ընդգրկված անձանց թիվը _____

քվեարկության օրը տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում ընդգրկված անձանց թիվը _____

Հիմնական ցուցակում ընդգրկված անձանց թվին ավելացրեց լրացուցիչ ցուցակում ընդգրկված անձանց թիվը և արձանագրեց տեղամասում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թիվը _____,

5) հաշվարկեց՝

Հիմնական ցուցակում քվեարկության մասնակիցների *(գրանցված և քվեաթերթիկներ ստացած անձանց)* ***թիվը*** _____

Քվեարկության օրը տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում քվեարկության մասնակիցների թիվը _____

Հիմնական ցուցակում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակում) գրանցված և քվեաթերթիկներ ստացած անձանց ստորագրությունների հիման վրա հաշվարկեց և արձանագրեց տեղամասում քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը _____: Քվեարկության մասնակիցների ցուցակները տեղադրեց ծրարում, ծրարը կնքեց և տեղադրեց պարկում:

Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ տեղամասում քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը հայտնեց տեղական հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովի նախագահին:

Բացվեց քվեատուփը:

Տեղամասային հանձնաժողովը ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ քվեատուփում առկա քվեարկության ծրարները և քվեաթերթիկները տեսակավորելուց և հաշվարկելուց հետո արձանագրեց.

Սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը _____,

Անվավեր քվեաթերթիկների թիվը _____,

1. «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկների թիվը	
2. «ՈՉ» քվեարկված քվեաթերթիկների թիվը	

Հանձնաժողովի նախագահը ժամը _____ ին հրապարակեց
ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո

տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը:

Արձանագրությունը կազմվեց չորս օրինակից՝ մեկ օրինակը փակցվեց տեղամասային կենտրոնում՝ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակների կողքին, մեկ օրինակը տեղադրվեց տեղական հանրաքվեի փաստաթղթերի պարկում, որը սահմանված կարգով փակվեց:

Պարկի վրա ստորագրեց հանձնաժողովի նախագահ _____ ,
ինչպես նաև հանձնաժողովի անդամներ՝

Հանձնաժողովի անդամի անուն-ազգանուն	**Ստորագրության կամ սեփական դրոշմի նմուշ**

Քվեարկության արդյունքների ամփոփման նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ _____
ստորագրություն

Հանձնաժողովի քարտուղար _____
ստորագրություն

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ
ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻՆ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիտորդի, ՀԼՄ ներկայացուցչի անուն ազգանուն,	Դիտորդական կազմակերպության, ՀԼՄ-ի անվանում	Նիստի օրը	ՏՀ-ի նիստին և դրվագային ընթացքում տեղամասային կենտրոնում գտնվելու ժամանակամիջոց	
			Ներկայ-անալու ժամը	**Դուրս գալու ժամը**

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՄՏԻՑ ԵՎ ԵԼԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մտից փաստաթղթեր		Ելից փաստաթղթեր	
Հ/Հ ստացման ամսաթիվ	Որտեղից է ստացվել և համառոտ բովանդակություն	Հ/Հ ուղարկման ամսաթիվ	Ուր է ուղարկվել և համառոտ բովանդակություն

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2015թ. հունվարի 30-ի N 4-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ

1. Տեղական հանրաքվեի տեղամասային հանձնաժողովը (այսուհետ՝ տեղամասային հանձնաժողով)՝ տեղական հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովից ստանում է համարակալված էջերով և համապատասխան վերադաս հանձնաժողովի կնիքով կնքված գրանցամատյան:

2. Տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանը բաղկացած է երեք մասից:

Առաջին մասը լրացվում է գրանցամատյանով սահմանված ձևին համապատասխան:

Երկրորդ մասում լրացվում է դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների վերաբերյալ անհրաժեշտ տվյալները:

Երրորդ մասում լրացվում են տեղամասային հանձնաժողովի մտից և ելից փաստաթղթերը:

3. Տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում փաստաթղթերի հաշվառումը կատարվում է հերթական համարակալմամբ՝ արաբական թվանշաններով:

4. Տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում գրառվում են նաև «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված՝ գրանցամատյանում պարտադիր գրառում պահանջող այլ գործողություններ: